YEREVAN STATE UNIVERSITY
BOARD OF TRUSTEES

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
СОВЕТ ПОПЕЧИТЕЛЕЙ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia
հեռ.՝ (+374-60) 71-01-31, ներքին՝ 11-31, էլ. հասցե՝ board@ysu.am , www.ysu.am

№ 010 «28» փետրվարի 2019թ.

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝ 2019 թ. փետրվարի 28-ին տեղի ունեցած թիվ 10 նիստի

ք. Երևան

Նիստին ներկա էին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 32 անդամներից 31-ը (կից ներկայացվում է Խորհրդի անդամների գրանցման ստորագրացուցակը):

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Գ. Մուրադյանը, բացելով Խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և մինչ նիստի օրակարգին անդրադառնալը՝ խորհրդի անդամներին և հյուրերին շնորհակալություն հայտնեց հրավերն ընդունելու ու նիստին մասնակցելու համար և հավելեց, որ օրակարգում այս պահին մեկ հարց է՝ ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշում ընդունելու հարցը՝ համաձայն ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի ձևակերպման (2.4 կետի 2-րդ ենթակետի):

Նախքան օրակարգային հարցի հաստատմանն անդրադառնալը՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Գ. Մուրադյանը խոսեց հարցի բարձրացման անհրաժեշտության երկու կողմերի մասին: Առաջինը ԵՊՀ գիտակրթական գործունեության արդյունավետության կտրուկ բարձրացման անհրաժեշտությունն է, և որ մեկ շաբաթ ժամանակը չափազանց կարճ էր խորհրդին ներկայացված փաստաթղթերի փաթեթը մանրամասն ուսումնասիրելու համար, որ նույնիսկ նախնական ծանոթության մակարդակում առաջանում են բազմաթիվ հարցեր ֆինանսական և ռազմավարական կառավարման արդյունավետության տեսանկյունից:

Գ. Մուրադյանը նաև նշեց, որ Հոգաբարձուների խորհուրդը պետք է ավելի շատ ժամանակ ունենար ուսումնասիրությունների համար, և ինքը խոստացել էր մեկ ամսից հրավիրել նոր նիստ: Ծանոթությունը հիմնական փաստաթղթային տվյալներին (ուսանողների թվի բացասական դինամիկան, ֆինանսական կառավարման արդյունավետության ցածր աստիճանը, նոր մասնագիտությունների բացման և խրախուսման միջոցով տնտեսության մեջ ԵՊՀ ներգրավվածության շատ ցածր դինամիկան, ինովացիոն գործունեության համարյա բացակայող վիճակը, օտարերկրյա ուսանողների ներգրավման խնդիրը և այլն) և ստեղծված իրավիճակում միջազգային հարթակում ԵՊՀ հեղինակության խաթարումը բերում են այն հստակ եզրահանգման, որ ԵՊՀ-ն ժամանակի մարտահրավերներին դիմակայելու, հանրապետությունում նախկինում ունեցած տեսակարար կշիռը վերականգնելու, դասախոսությունների որակական և գիտակրթական մակարդակները բարձրացնելու համար կարիք ունի որակական և քանակական արագ փոփոխությունների: Վերոնշյալ հանգամանքներում ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի ուղղակի պարտականությունն է բարձրացնել ԵՊՀ ռեկտոր պարոն Ա. Սիմոնյանի լիազորությունները շարունակելու կամ հակառակը՝ դրանք դադարեցնելու նպատակահարմարության հարցը:

Գ. Մուրադյանը խոսեց նաև հարցի երկրորդ կողմի մասին, որն է այսօր առաջացած հասարակական ոչ ադեկվատ գնահատականը: Նախորդ մեկ ամիսը ԵՊՀ-ի համար հասարակական տեսանկյունից բարդ ժամանակահատված էր, և որ խնդրի հանգուցալուծում չստանալու դեպքում ամեն օր միայն ու միայն ավելի է վատանալու իրավիճակը: Այս ամենը՝ որպես հիմնավորում իմ տեսակետի և օրակարգի խնդրին:

Այնուհետև ելույթ ունենալու ցանկություն հայտնեց ԵՊՀ ՈՒԽ նախագահ Դ. Ափոյանը՝ նշելով, որ նախօրեին ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի ուսանող-անդամները տարածել են հայտարարություն և փաստեց, որ ըստ իրենց՝ ԵՊՀ-ում կա բարեփոխումների անհրաժեշտություն, և այդ բարեփոխումները վստահաբար ենթադրում են նաև անձերի փոփոխություն, սակայն ստեղծված իրավիճակն առաջ է քաշել ավելի կարևոր արժեքների պահպանության անհրաժեշտություն, որոնք են իրավականությունը, ինքնավարությունը և բարոյականությունը: Դ. Ափոյանը հավելեց, որ բուհն ունի բազմաթիվ խնդիրներ, և պետք չէ այդ ամեն ինչը կապել ռեկտորի անվան հետ: Հարցն ընդհանուր է, և այն պարոն Ա. Սիմոնյանի անձի հետ կապված չէ: Մենք կարող ենք նման մեխանիզմով ցանկացած հետագա ռեկտորի լիազորությունները դադարեցնել: Եթե մենք նման մեխանիզմը նախադեպ դարձնենք, ցանկացած ռեկտորի ու ցանկացած պաշտոնյայի նման մեխանիզմով անվստահություն կհայտնենք ու կհեռացնենք պաշտոնից:

Ձայնի իրավունք խնդրեց ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի վարիչ Ա. Վաղարշյանը՝ փաստելով, որ ստեղծված իրավիճակի լուծման ճիշտ և արդարացի ուղին իրավականն է, ու ցանկացած որոշում ընդունելու դեպքում պետք է օրենքով շարժվել: Ամբիոնի վարիչը

փաստեց, որ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամներին տրված պարզաբանումը, թե ինչ հիմքով է հրավիրվել այս օրակարգային հարցով նիստը, խոցելի է: Իր ելույթում Ա. Վաղարշյանը բացատրեց, որ խնդիրը գործող ակտերի շրջանակն է, որով կարգավորվում են կրթական հարաբերությունները և համալսարանի կառավարման համակարգը: Մի կողմից գործում է հիմնադրամների մասին օրենքը, մյուս կողմից՝ համալսարանը կրթական կազմակերպություն է և գտնվում է կրթական օրենսդրության գործողության տիրույթում, որտեղ էլ գործում են երկու օրենք՝ «Կրթության մասին» և «Բարձրագույն հետբուհական կրթության մասին» օրենքները, ինչպես նաև դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերը, մասնավորապես՝ համալսարանի կանոնադրությունը և այն կանոնակարգը, որի հիման վրա մենք գործում ենք:

«Հիմնադրամների մասին» օրենքով կարգավորվում են համալսարանի արտաքին հարաբերությունները, իսկ ահա ներքին կառավարումը ոչ մի կապ չունի այդ օրենքի հետ: Հետևաբար՝ միանշանակ ասել, որ պետք է գործել ըստ «Հիմնադրամների մասին» օրենքի իրավական տեսանկյունից ճիշտ չէ: Ուստի առաջարկեց փոխել օրակարգային հարցը՝ այն ձևակերպելով «Համալսարանի շուրջ ստեղծված իրավիճակի մասին քննարկումներ»:

Նիստի ընթացքում ելույթ ունեցավ նաև ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի վարիչ Մ. Ապրեսյանը՝ համաձայնելով այն շեշտադրման հետ, որ իրավական պարզաբանման մեջ կան թույլ կողմեր՝ անդրադառնալով Արևմտյան բուհերում վաղուց գործող այն ինստիտուտին, երբ բուհերը ղեկավարվում են դրա նախագահների և ռեկտորների կողմից: Բարոյական տեսանկյունից մեզնից ոչ ոք չի կարող խնդրել կամ հորդորել ռեկտորին իջնել այն ճանապարհից, որը նա բարձրացել է ամբողջ կյանքում:

Այնուհետև ելույթ ունենալու ցանկություն հայտնեց ԵՊՀ մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի տնօրեն Ն. Հարությունյանը, որը հիշեցրեց, որ դեռևս մեկ ամիս առաջ տեղի ունեցած նիստի ժամանակ բոլորը միաձայն դրական գնահատեցին ռեկտոր Ա. Սիմոնյանի հաշվետվությունը, և որ համակարծիք է պարոն Ա. Վաղարշյանի հետ օրակարգային հարցի ձևակերպման փոփոխման հարցում:

Այլ հարցեր և ելույթներ չհնչեցին, ուստի նախագահ Գ. Մուրադյանն առաջարկեց օրակարգային հարցը փոխարինելու առաջարկը դնել քվեարկության. կողմ՝ 13, դեմ՝ 14, որը ձայների համամասնությամբ չընդունվեց:

Նախագահ Գ. Մուրադյանն առաջարկեց նախօրոք օրակարգում տեղ գտած հարցը հաստատելու առաջարկությունը դնել քվեարկության. կողմ՝ 15, դեմ՝ 10, որը ձայների պարզ մեծամասնություն չապահովելու պատճառով չընդունվեց:

Քվեարկությունից հետո ելույթով հանդես եկավ ՀՀ ԱԺ պատգամավոր Հ. Հովհաննիսյանը՝ նշելով, որ վերջին օրերին իրականացվող ակցիաները ոչ թե ի շահ, այլ ի վնաս համալսարանի էին, և ստեղծված իրավիճակը նաև այն պատճառով է, որ տարիներ շարունակ մարդիկ չեն կարողացել ազատ արտահայտվել և բազմիցս ենթարկվել են հալածանքների:

ՀՀ ԿԳՆ լեզվի պետական կոմիտեի նախագահ Դ. Գյուրջինյանը նշեց, որ եթե չեղարկվի նիստը, ապա կառկախվի նաև համալսարանի հարցը, և հիշեցրեց, որ հնչել է մեկ այլ առաջարկություն ևս. քվեարկությամբ հաստատել նոր օրակարգ, որի մեջ կմտնի ինչպես պարոն Ա. Վաղարշյանի առաջարկած, այնպես էլ նախօրոք ներկայացված հարցը, և առաջարկեց քվեարկել այն:

ՀՀ ԱԺ պատգամավոր Հ. Դանիելյանն առաջարկեց քվեարկությամբ հաստատել օրակարգային և առաջարկված՝ «Համալսարանի շուրջ ստեղծված իրավիճակի մասին քննարկումներ» հարցերի փաթեթային տարբերակը:

Այլ հարցեր և ելույթներ չհնչեցին, ուստի նախագահ Գ. Մուրադյանն առաջարկեց օրակարգային հարցի փաթեթային տարբերակը դնել քվեարկության. կողմ՝ 12, դեմ՝ 13, որը ձայների համամասնությամբ չհաստատվեց:

ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Գ. Մուրադյանն ամփոփեց Խորհրդի աշխատանքը և նիստը հայտարարեց փակված:

Խորհրդի նախագահ՝ **Գ. Մուրադյան**

Խորհրդի քարտուղար՝ **Ա. Իսրայելյան**